

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրության միջոցով:
Օտարաբարձարացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէրէր):
Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՄՇԱԿ ԿՐԸԱՆՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ 1878 թ. 4

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒԹ Ե ԸՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներէն հետեւեալ օրերէրէր:
Լրագրի դէբը և պրօգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԼԿԸՆ ՀԵՌԵՐԻՆԵՐԻ: ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարվանը 6 ռուբլ: Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ:
ՄԻՆԵՆՁԻՆ ՀԵՄԵՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատր: Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցեով՝ ТИФ-ЛИСЪ Редакция «Мшакъ»:
Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Ինչի ամեն բան հոգեւորականներից ենք պահանջում:—Ներքին տեսութիւն: Նամակ Ալեքսանդրապոլից: Նամակ Խմբագրին: Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Փոքր-Ասիա: Իտալիա: Նամակ Թիֆլիսից: Արտաքին լուրեր:—Խառն լուրեր:—«Մշակի» հեղագիրներ:—Յայտարարութիւններ:—Տեղեկացոյց:

Ինչի ամեն բան հոգեւորականներից ենք պահանջում:—Ներքին տեսութիւն: Նամակ Ալեքսանդրապոլից: Նամակ Խմբագրին: Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Փոքր-Ասիա: Իտալիա: Նամակ Թիֆլիսից: Արտաքին լուրեր:—Խառն լուրեր:—«Մշակի» հեղագիրներ:—Յայտարարութիւններ:—Տեղեկացոյց:

«Մշակի» 152-որդ համարի մէջ զծի տակ տպված յօդուածը յարուցանում է մի շատ հետաքրքիր խնդիր:

Մենք հայերս սովոր ենք, առհասարակ մեր բոլոր պահանջները միմիայն մեր հոգեւորական դասակարգին անել:

Հարկաւոր է, օրինակ մեր հայոց ազգաբնակչութեան մէջ վեճակագրական, ազգագրական, կամ այլ հասարակական նիւթ հաւաքել,—մենք մեղադրում ենք մեր հոգեւորականներին, որ նրանք այդ տեսակ աշխատանք չեն յանձն առնում: Մեզ հարկաւոր է հայոց ազգի կեանքը հետազօտել, հարկաւոր է ժողովրդի մէջ դպրոցներ հիմնել, կրօն և մայրենի լեզու քարոզել,—ի՞նչ մեր հոգեւորականները այդ մասին չեն հոգում, հարցնում ենք մենք, և այլն:

Բայց մի և նոյն ժամանակ մենք մոռանում ենք, որ բացի մեր հոգեւորականների դասակարգից նոյն աշխատանքը կարող էին

յանձն առնել և մեր ժողովրդական ուրիշ դասակարգերը, որոնք զուցէ հոգեւորականներից էլ զարգացած և լուսաւորված են:

Հատ հեշտ է իրան ազգասէր ձևացնել բայց և ոչինչ չանելով ազգի առաջադիմութեան համար, զեղովել միմիայն իր սասնագիտութեամբ, վարել բժշկի, աստիճանաւորի, ուսուցչի պաշտօնը և մի և նոյն ժամանակ ամեն բան պահանջել միմիայն հոգեւորականներից, որոնք զուցէ անընդունակ են մինչև անգամ կատարել այն, ինչ որ մենք նրանցից պահանջում ենք:

Մեզ հարկաւոր է այժմ հաւաքել մեր ազգային կեանքի ուսումնասիրութեան համար գիտնական հում նիւթեր, մեզ հարկաւոր են ճիշդ ստատիստիկական, ազգագրական նիւթեր մեր ժողովրդական կեանքի մասին: Մի՞թէ մեր պաշտօնեաները չեն կարող իրանց ծառայութենից գուրս ժամանակ գտնել ժողովրդի կեանքից հետաքրքիր իրաւաբանական փաստերի մասին տեղեկութիւններ ժողովելու համար: Մի՞թէ մեր բժիշկները չեն կարող հարստացնել մեր գրականութիւնը հայերի ընտանեկան, բարոյական, առողջապահական կեանքի մասին տեղեկութիւններ և ճիշդ թւանշաններ հաղորդելով: Մի՞թէ մեր դպրոցների բազմաթիւ ուսուցիչները նոյնը չեն կարող անել ժողովրդի ընտանեկան, դպրոցական

և հասարակական կեանքի վերաբերութեամբ:
Նկարելի է ամեն բան սպասել միմիայն մի դասակարգից: Ազգի ճշմարիտ առաջադիմութիւնը հնարաւոր է իրագործել միմիայն նորա բոլոր դասակարգերի միմեանց մէջ սերտ համագործութեամբ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ
1 սեպտեմբերի
Ալեքսանդրապոլից ընդունակ են ամեն մէկ օտարական հային խաբեայ, լրտես, փախստական, թոկից փախած և որ աւելին է՝ պատուող եղբիւր անտանել, առանց քննելու նրա լաւ կողմերը կամ յատկութիւնները, մանաւանդ երբ մէկը իր թանկագին ժամերը կորցնում է ծանօթանալու հասարակութեան կեանքի հետ, նրա խոյր, աչքի ընկնող, անտանելի պակասութիւնները և նրա բարքը ու վարքը տպւած տառերով երևան հանել: Բայց պատուելի ալեքսանդրապոլից ոչ թէ միայն չեն սիրում ալեքսանդրներին, այլ փոխանակ խրատվելու, աշխատում են բարոյապէս փչացած հասարակութեան համար սրտացաններին ոտքի տակ գցել: «Պորս դու պատուիրեցիր» նրանց կողքերը տորել և ուղիղ ճանապարհ ցոյց տալ: Հետեւեալ տողերը կարծեմ բաւական են ասածներս ապացուցանելու համար:
—Աղաք, հէջ առպէս բան ալ կեղնի, ասում է մէկը «Մշակի» ձեռքին, դահա ինչ օրեր չէինք տեսեր աչքբիս երեսին:
—Հէ, ալ ինչ կայ, հալի աղաք:
—Ջան, դահա ինչ պիտի էղնի: Աս բութ փառանք (կուսպաշտեր) կուկան մեր քաղաքը, չես գիտեր ինչ ջահանդաշն, փարա կը փառտկին կը, մեր հաց կուտին կը, մեզի ալ մարդու տեղ չենի տնիր ու զազէթաներու մէջ ալ մեծ անում խալտառակ կէնին կը, մեր քաղքի անում բէղնամ կէնին կը...
—Աղ օվ է, ջան, որ աղ խալթը կէնէ, հարցնում են նրանից:
—Տօ ջան, փախստականին մէկը, պատուողին մէկը, շառլաթանին մէկը, ես իմ... և դարձեալ լեզուս կը գրէ, չէմբղեր թէ ասանկների ինչ գործն է:
Ահա թէ մարդիկ ինչպէս են վարվում իրանց անկողնի, բայց ի հարկէ անփորձ բարեկամների հետ: Բայց բարեբաղդաբար առ այժմ ազատ եմ եղել փորձանքից, չը գիտեմ ինչ հրաշքով որ իրանք ալեքսանդրապոլից դարմանք են յայտնում անգամ այդ մասին:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ
Թիֆլիս 28 օգոստոսի
Լուրով որ տեղական լրագիրներից մինի մէջ, որի անունը տալ չենք ցանկանում, հուշուց մի համակ կայ տպված, որպէս հուշու գործերով հետաքրքրելով, մենք կարգադրեցինք այդ նամակը: Յիշեալ նամակը, որպէս ծնունդ մի կրքոտ պարտի, անխնայօրէն իւրապայել օրգանի միջոցով յօշափում է մինչև անգամ օր: Ալիխանեանի պատիւ, որի գործունէութիւնը մեզ յայտնի է իր արդիւնաբերութեամբ:

Անշուշտ յիշում է «Մշակի» ընթերցողը թէ ինչեր անցան հուշու դպրոցների գլխին հայր Սեդրակեանի շնորհով, («Մշակի» 78 թ. № № 75, 87, 112, 113, 114 և այլն) որ յանձն էր առել տեսչին իր խմբով հեղացնելու և մեծակալվածք դպրոցի եկամտաւ փրա տրելու («Մշակ» 78 թ. № № 115, 117 և այլն): Այդ խմբի պատու է ի անդամներից մինն էր և օրիորդը:

Դեռ օգոստոսին 1877 թ. պ. Պապաջանեան իրաւունք ստանալով հոգաբարձութենից, ուսուցիչներ և վարժուհի որոնելու մտքով Թիֆլիսում երկար նեղութիւններից յետոյ հաղիկ կարողացաւ 600 ռ. ուժիկ և բնակարան խոտանալով հրաւիրել նաև նոյն օրիորդին: Հուշու մէջ նա եռանդուն և բարեխիղճ ջանահար եղողներից մինն էր վերականգնելու հուշու ընկած դպրոցը որ յատկապէս բարենամբաւ օր: Ալիխանեանի շնորհիւ կարճ ժամանակում օրինաւոր դպրոց դարձաւ, ուր դեռ երկար երևում էին Սեդրակեանի կենդանի յիշատակները... Անտանելի էին այս միջոցում խմբի տառապանքները, որոնց մասնակից էր առաւելագէս մեծ, օրիորդը: Եւ այն միջոցում երբ տեսնուէր օր. դպրոցի յարմար տեղ չը ճարելով աղերսում էր Սեդրակեանին տալ իր բնակարանը դպրոց շինելու, իսկ սա զանգատվում էր—թէ «տեսնուէր ապա իմ բարեկամն է, որ կամենում է տունս խել», *) այս միջոցում անգամ օր: Ալիխանեանը կառավարում էր մեծ տանջանքով 200 տղաների հետ խառնված իր 28-ից մօտ 70-ի հասցրած աշակերտուհիներին մի և նոյն դպրոցում... Եւ ձվ կուրանայ թէ նոյն օրիորդ էր, որ մեծանալով մօտ գնալով երաշխաւոր էր լինում հասակաւոր և օտարախոս օրիորդներին և դպրոց տանում: Նոյն օրիորդի ջանքն էր որ դպրոցն ունեցաւ երգչհոնի վարժուհի, որ հրաւիրվեցաւ տեսչի և իր ուսուցիչների նուիրատուութեամբ, մեծ, օրիորդը վճարում էր նոյնպէս ամսական 6 ռ. 86 կօպ:

Այն համեստ ու տոկուն աշխատանքը որ նուիրում էր նա իր այժմ 100-ի հասցրած աշակերտուհիներին խոտովանում էին ոչ միայն շուշեցիք, այլ և ուսուցչ. և հոգաբարձական ժողովները: Ահա այդ մասին հոգաբարձական ժողովի վկայութիւնը, որ շնորհակալութիւն է յայտնում նոյն օրիորդին—այսպէս:

«Պարաբաղի վիճակի հայոց հոգեւոր ազգային դպրոցների տեսուչը վկայելով խորհրդարանիս մէջ ձեր ջերմեռանդագին և անխնայ աշխատասիրութիւնների մասին օրիոր. դպրոցի սաների կրթութեան և դատարարակութեան մէջ առաջարկեց ձեզ որպէս քաջալերութիւն և խրախոյս և ապագայում աւելի ևս աշխատանքի և ջերմեռանդ լինելու համար, վարձատրել ձեզ արժանապէս, որի մասին խորհրդարանիս անդամները արժան համարեցին վարձատրել ձեզ դպրոցական գումարից 50 ռուբլ արծաթով,—սանձանքից առաջադրել հոգ. դանձապետ պ. Աւագ Ամբրուսիանին դպրոցի 1877 թ. մուտքի և ծախքի մատենաւում ծախքերի մէջ հանել 50 ռ. ձեր վարձատրութեան համար և այդ գումարը սրա հետ յանձնել ձեզ և յայտնել ձեր մեծարգոութեամբ խորհրդարանիս ժողովի և ուսում. վարչութեան կողմից կատարեալ շնորհակալութիւն ձեր այդ օրինակ գովելու արժանի ջերմեռանդութիւնների և աշխատութիւնների համար, որ ցոյց է ք տալիս դպրոցի մէջ մուտք գործելու օրից նրա սաների յառաջադիմութեան մէջ և սրա հետ առաջարկելով ձեզ թէ հոգաբարձութիւնս լրայոյս է մնում, որ դուք աւելի ևս վառվելու էք սիրով և ջերմեռանդութեամբ դպրոցի սաների յառաջադիմութեան և լուսաւորութեան մէջ, որով և պատկերու էք առ ձեզ ունեցած ամենքի յոյսը»:

Մայիս ամսում, երբ արդէն Սեդրակեանի դասաները դպրոցի կործանման համար անտանելի դարձան, որի մասին մեծահատոր մի գրվածք

*) Տես հոգ. ժողովի 31 մայիսի 78 թ. ստացած մի յայտարարութիւնը:

շուտ ժամանակում թարգման կը լինի, տեսուչը հրաժարվեց. հրաժարվեցին և պատեհի ուսուցիչները:

Նոր ուղի եկած և ժողովրդի դատաստանին հանդիպած հոգաբարձութիւնը այդ օր (1878 թ. մայիսի 23, № 48) աղերսող յայտարարութեամբ դիմեց մեծ. օրիորդին կարգելով նրան իրական և անկախ տեսուչի օր. դպրոցի մէջ որպէս և հրաժարված ուսուցիչներին հրաժարվելու արգելող յայտարարութիւններով...

Մեծ. օրիորդը նկատելով թէ տեսուչ զրկող հոգաբարձութիւնը կարող է մի և նոյնը անել և իր հետ, նկատելով, որ ամբողջ Շուշին, բացի 20—30 հոգուց, ընդգէմ է Սեդրակեանին, իմանալով, որ առանց օրինաւոր խմբի, ինքն չի հասնի իր ջանքերի պողաբերութեանը. բացի այս—չը նայելով անախորժ լուրերին և նոյն իսկ իր սեռակից պաշտօնակցի կոպիտ յարաբերութիւններին, Սեդրակեանի և Հախումովի անընդհատ խնդրանքով և խնդրանքով պ. Պապաշահեանի և ուսուցչական խմբի յանձն առաւ շարունակել իր պաշտօնը մինչև պայմանաւորված ժամանակի վերջը:

Օգոստոսի 15-ին հրաժարվեց նա: Սեդրակեանը, որ, ինչպէս ասում են, նամուսի խաթիր այստեղ—այնտեղ էր ընկել, այլ ևս ուսուցիչի ու վարժուչի ծանրելու յոյսը կտրած, բացի մի քանի գտնովի պարսկերէնից և տիկիներէնից, մնում է չփոխված:

Եւ աղքատէր Հախումովն անգամ ամեն միջոցներ է գործ դնում, բայց հեռաւոր օրիորդը նշանակութիւն չէ տալիս խոստումներին և հեռանում է Շուշուց:

Ուսուցչութիւնը անանսութիւն չէ, և ուսուցչին որպէս եղ կամ գոմէշ լծել չէ կարելի...

Եւ անա մի լրագրի յօդուածագիրը սկսում է այրված սրտի սև միջիթար կարգով:

Եւ մենք դանդաղում էլ ենք թէ մեր իգական սեռը փախչում է ասպարիզից...

Այդ նրա կատարեալ իրաւունքն է, քանի որ այդպէս անըզոքաբար և ստորամիտ կը լինենք դէպի ամենքը և դէպի մանաւանդ մեր քնքոյշ, անձնանուէր սեռը...

Կատարելով մեր կարծիքով ոչ աւելի մի կըրքոտ յօդուածագիրն է, որքան մի խմբագրութիւն (եթէ կարելի է այսպէս անուանել), որ թոյլ է տալիս անխորհուրդ հրատարակութիւններին...

Օր. Ալիխանեանի արժանաւոր պատիւը և ընդհանրական յարգը խոստովանելով հրապարակապէս, խնդրում ենք ներողամտութիւն դէպի անըզոքաբար պարունակը, որոնց խօսքը ոչինչ գին ունի ամենքի համար...

Իսկ ինչ վերաբերում է գեր. Կ. Սեդրակեանին, մենք ընդունում ենք որ մեծ զգուշութիւն ձեռք բերի, և գտնի իր ժողոված պարունակով և տիկիներով դպրոցական գործը այս տարի էլ կուրի ասպարէզ չը լինի՝ սրան նրան միտել տալով...

Բայց և այնպէս աներկեայ ենք, որ նրան ամբողջ Շուշին ճանաչելով իր հինգ մասի պէս, դժուար թէ յաջողացնի իր կիսախախտ իշխանութիւնը ուղղման պէս կառավարել... Յաջողութիւն նրան և իր ֆիլոսոֆներին...

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳՐՈՒՄ

Երևան 30 օգոստոսի

«Մշակի» № 146 մէջ կարդացինք ձեր անաչառ պատասխանը, որ դէպի ձեր յօդուածագիր երևանցի ուղղելով ի միջի այլոց՝ ասում էք. —«Երևանցի. ասում էք, որ կոնդըցիք բամբակում են օր. Տ. Գ. —ին. հաւատում ենք... և վերջանում էք զժողով կոնդըցիք իրանց բաղդաւոր համարեն, որ օրիորդի պէս վարժուչի ունենա՞ Պարոն խմբագիր, եթէ պ. Երևանցու յօդուածը տպված լինէր, մենք կը հակադասեինք թէ ինչ կողմից են, ըստ նորա կարծեաց, կոնդըցիք բամբակում օր. Տ. Գ. —ին. բայց տարաբաղդաբար այդ յօդուածը տպված չը լինելով, օրամբանքը բաժնւում է մի առաջական միտք, և իրօք ցաւ է պատճառում անձնանշաններին, որոնք ճանաչում են օրիորդի անարատ վարք ու բարքը և մանկավարժական ձիրքը: Այն անկեղծ սէրն ու յարգանքը, որ վայելում է օրիորդը կոնդի հասարակութեան կողմից և այն արժանաւայել համակրութիւնը, որ դպրոցի վարժութեան կողմից եղել է և կը լինի միշտ դէպի վարժուչին,

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈՔՐ-ԱՍԻՍ

(Շարունակութիւն և վերջ)

Արարները, որ ցամաքի հարաւում են ընալվում և որոնք անուանվում են Բ. Կրան հպատակներ են, ճանաչում են միայն իրանց սեփական շէյխերի իշխանութիւնը: Այս ֆէյլախները և ոչ բեզուլները նպատաստաւոր չեն լինում Բ. Կրան քաղաքական իշխանութեան զօրեղանակուն: Նրանք թիւրքերն չեն սերում և դէպի նրան չեն գրում ոչ մի ազգային ազգակցական զգացմունք: Բազմաթիւ մօտերքում գտնված ցեղերը, իրաւ է, վերջին պատերազմի ժամանակ տուեցին մէկ քանակութիւն բաշխուողներին, բայց ոչ աշխատելու, ոչ և գիւղացիները բոլորովին քաջութիւն չը ցոյց տուին, և ոչ ազգասիրութեան նման մի բան:

Ձեռքները ինչպէս եւրօպական, նոյնպէս և ասիական Թիւրքերը դաղթականներ են առաւելագոյն Արաւելայից և Իսթանբուլից, որոնք թողեցին իրանց հայրենիքը Արմի պատերազմից յետոյ և մանաւանդ Շամիլին վերջնականապէս յաղթելուց յետոյ: Կովկասեան լեռնաշղթաները ինչպէս Հայաստանում և Փոքր-Ասիայում, նոյնպէս Բոքարայում և Թրակիայում հաւատարմի մնացին իրանց յաւիտաւորական հակամտութեան և Բ. Կրան շատ շուտով համոզվեցաւ, որ ինքն հիւրասիրել է աւազակների խմբին: Կառավարութիւնը յոյս ունէր, որ պատերազմ պատահած ժամանակ չէրկէաներ կարելի է մէկ լաւ անկանոն զօրք կազմակերպել բայց փորձը քանդեց բոլոր նրա յոյսերը: Այս 300,000 կամ աւելի մարդիկ, որ ցրված են ներկայ ժամանակում Փոքր-Ասիայում և Սիրիայում, մէկ այնպիսի տարր են կազմում, որոնցից թէ կառավարութիւնը և թէ երկիրը ուրախ կը լինէին ազատվել:

Փոքրեմէնները կամ իւրուհիներ սերնդակից են օտոմաններին. նրանք նոյնպէս պահպանել են իրանց նախնի հովիւ-աւազակների կեանքի եղանակը: Նրանք զանազանվում են քուրդերի իրանց աւելի հանգիստ և պարզ բնասիրութեամբ, բայց մնացած ամեն բաների մէջ շատ նման են նրանց: Նրանք նոյնպէս կառավարվում են իրանց գլխաւորներով և համարեն չեն ճանաչում տեղական թիւրքաց իշխանութիւնը: Հիւսիսային Սիրիայում և Փոքր-Ասիայի հարաւարեւմտեան մասում թուրքեմէնների մի քանի զիւղեր կան, իսկ թուրքեմէնների մեծամասնութիւնը թափառական կեանք է վարում: Նրանք խօսում են թիւրքաց աղաւաղված բարբառով:

Հրէաները, որոնք ցրված են թիւրքական Ասիայում, մեծ մասամբ տասն և հինգերորդ դարու սպանիական մեծ գաղթականութեան սերունդներ են: Միայն հին սկզբնական ցեղի փոքրածիւ սերունդները գտնվում են Պալեստինայում և Դամասկոսի մօտ: Հրէաները մէկ առանձին համայնք են կազմում, որը կառավարում են սեփական բարբիները և աշխարհական մեծաւորները: Թաթարները 1784, 1812 և 1854—1856 թւերին փոքր թւով Արմից Կոնստանդնուպոլիս և Փոքր-Ասիա գաղթելով, կազմում են ներկայումս, ամենաօրինաւոր և ազգաբնակութեան ամենաշխատասէր տարր: Ցիգանները թիւրքական էլ նոյնպէս վայրենի և զաղտնի ցեղ են, ինչպէս և ամեն տեղ, և նրանց հնշտ է որոշել մնացած ազգաբնակութիւնից:

Իրանց դէպի կառավարութիւնը ունեցած յարաբերութեան մէջ, բոլոր զանազանակերպ ցեղերը երկու որոշ խումբերի են բաժանվում—մահմետականների և քրիստոնէի վրա: Մահմետականներին պատկանում է մեծամասնութիւնը, որը աւել կամ պակաս մաքուր

խղճմանքով դաւանում է իսլամը, իսկ բաշխաներին պատկանում են քրիստոնէական, հրէական և կրիստոնէական զանազան համայնքներ: Գործնականապէս, այս բաժանումն կայսերութեան անկման պատճառ եղաւ: Եւրօպայում և զանազան տարրերը մէկ ամբողջութեան մէջ ձուլելու արգելք դարձաւ Ասիայում: Այդպէսով, երկիրը բարձրացնելու համար, Մակ-Կոնի կարծիքով, անհրաժեշտ է ոչնչացնել մահմետականի և քրիստոնէի մէջ եղած սահմանը և երկուսին ևս մէկ մակերևոյթի վրա դնել օրէնքի առաջ և ապա վերանորոգել օրէնքը և կառավարութիւնը, հիմնել հաւասար դատարան, հաւասար իրաւունքներ թէ մահմետականներին և թէ քրիստոնէականներին ապահովելու համար: Բայց այս վերանորոգութիւնները չէ կարող օտոմանեան կառավարութիւնը կատարել, մանաւանդ ներկայ ժամանակում երբ Բ. Կրանը չունի ոչ ընդունակ և ոչ օրինաւոր միջնորդներ: Հեռաւար փոքր-Ասիայի կառավարչական բոլոր սխառմայի վերանորոգութեան ծանր խնդիրը ընկնում է անգլիական կառավարութեան վրա, իր յանձն առած պարտաւորութիւնների հիման վրա:

Իսկ այս վերանորոգութիւնները միայն այն ժամանակ կը մոցնվեն, եթէ որ օտոմանեան իշխանութեանը անգլիական իշխանութիւնը կը փոխարինի: Եւ հարկէ, գրում է Մակ-Կոն, վերջը քաղաքակրթութիւնը այս փոփոխութիւնից շատ բան կը շահի, բայց մենք ևս պէտք է պարզ հասկանա՞նք, թէ ինչ նշանաթիւն ունի մեր նոր յանձն առած պարտաւորութիւնը:

Իսկայէս, անդիւրացի շատ բան ունեն մրտածելու, եթէ միայն նրանք զիտաւորութիւն ունեն Բ. Կրան հպատակ ժողովուրդները վիճակը բարելաւել: Բայց միթէ Մակ-Կոնին յայտնի չէ, որ Անգլիան միայն նրա համար զաշտադրութիւն կապեց Բ. Կրան հետ, որ Խուսաստանի ընդարձակվելուն արգելէ:

ԻՏԱԼԻԱ

«Թոյլ տուէք ինձ, գրում է լրագիրներից մէկի թղթակիցը Տրիեստից, հաղորդել ձեզ իմ աւստրո-իտալական տպաւորութիւնները: Ես արդէն գրեցի ձեզ թէ ինչպէս է վերաբերվում Իտալիան եւրօպական այն յանձնարարութեանը, որ Բերլինի կոնգրեսը գրեց Աւստրո-Ունգարիայի վրա: Առաջ Իտալիայում ամենքը բարկացած էին Աւստրո-Ունգարիայի վրա, որ Եւրօպայից այդպիսի պատաւոր յանձնարարութիւն և նշանաւոր վարձատրութիւն ստացաւ: Իտալացիները մանաւանդ աւելի բարկացած էին այն ժամանակ, երբ Անգլիան առանց ոչոքի կարծիքը հարցնելու տիրապետեց Կիպրոս կղզին: Ժամանակով այդ նախանձառ և բարկութեան զգացմունքները թուլացան: Սրանից չը պէտք է եզրակացնել որ Իտալիան ներկեց Անգլիային և Աւստրիային նրանց նոր տիրապետութիւնները: Նա դարձեալ զոգոթած է առհասարակ Եւրօպայի, իսկ մասնաւորապէս Անգլիայի և Աւստրիայի դէմ, բայց այդ զորդուն միութեանը է շնորհիւ այն անաշուղտութիւնների, որոնց պատահեցին Բոսնիա և Հերցեգովինա զբաղող աւստրիական զօրքերը:

Աւստրիացիներին թէ Բոսնիայում և թէ Հերցեգովինայում հրացանաձուլութեամբ ընդունեցին: Յետոյ կամայ կամայ այդ հրացանաձուլութիւնը կատարելու փոխվեցաւ: Բոսնիացիների և հերցեգովինացիների բողոքը զնաւարկած, հայրենիքը օտարի ապագաութիւնից պաշտպանող ժողովրդական շարժման ձև ստացաւ: Աւստրիական զօրքերը ջարդվեցան, օգնական զօրքեր հարկաւոր եղան:

